



ԱՇԽՈՒՆԶ ԴՈՂՈՍՅԱՆ

«ՊԱՋԻՐԻԿ» ԳՈՐԳԻ
ԾԱԳՈՒՄՆԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան - 2013

Յետազոտողների շրջանում միշտ էլ արդիական է եղել գորգագործական մշակույթի ծագումնաբանության ուսումնասիրումը: Գեղազարդման համակարգի բազմազան տարրերով ու գունային նրբերանգներով, տեխնիկատեխնոլոգիական յուրահատկություններով հարուստ այս գործվածքները միշտ էլ առանձնակի տեղ են ունեցել մշակութային արժեքների շարքում, որով էլ հիմնականում բացատրվում է դրա ծագումնաբանության հանդեպ ուսումնասիրողների ու առհասարակ մշակութային աշխարհի մեծ ու չդադարող հետաքրքրության փաստը, որը սկզբնավորվելով XIX դարի կեսերից, շարունակվում է նաև մեր օրերում: Այս ասպարեզում առանցքային նշանակություն ունեն գորգի հնագույն նմուշներն ու այդ ոլորտին վերաբերող գրավոր ու պատկերային սկզբնաղբյուրները:

Յետազոտողներին հայտնի գորգի վաղագույն նմուշների թվում բացառիկ է «Պազիրիկ» կոչված գորգը, որը հայտնաբերվել է 1949 թ., Լեռնային Ալթայի Պազիրիկ կուրգանի թիվ 5 դամբարանից: Գորգը շուրջ 2500 տարի մնացել է սառած դամբարանում ու այդպիսով զերծ լինելով արտաքին որևէ ազդեցությունից, գործնականում անխաթար պահպանվել է մինչ մեր ժամանակները: Բացի այդ, այն աչքի է ընկնում գեղազարդման հարուստ համակարգով, գունային երանգների բազմազանությամբ և, ի վերջո, ամբողջական պատկերացում է տալիս 2500 տարի առաջ եղած գորգագործական տեխնոլոգիայի մասին /պատկեր 1/: Ամեն դեպքում ակնհայտ է, որ այդպիսին կարող էր գործվել միայն գորգագործական մշակույթի զարգացած ավանդույթներ ունեցած քաղաքակրթության կենտրոններում: Կարծում ենք, որ հենց այդ պատճառով է, որ արդեն ավելի քան հիսուն տարի դրա ծագումնաբանության հարցը դարձել է անընդմեջ վիճաբանությունների առարկա:

Պեղումների ղեկավար Ս. Ի. Ռուդենկոն, համեմատելով այդ նմուշի և հարևան Բաշադարի կուրգանից հայտնաբերված գորգերի ու թաղիքների գեղազարդման տարրերը, ինչպես նաև, նկատի ունենալով դրա գունա-հորինվածքային ներդաշնակ լուծումներն, արդեն այն ժամանակ հանգել էր Պազիրիկյան գորգի առաջավորասիական ծագում ունենալու տեսակետին:¹ Ընդ որում, հենվելով իր ուսումնասիրությունների արդյունքներին, նա գտնում է, որ «Լեռնային ալթայյան ժողովուրդներին բնորոշ նախշերի մեզ հայտնի հսկայական քանակության մեջ չկան այս գորգի նախշերին նմանվողները»:²


Անտարակույս, գորգի գեղազարդման մանրամասերն ու մատուցման ընդհանուր սկզբունքները համահունչ են ասորաբաբելական, վաղ հայկական ու արքեմենյան ավանդույթներին: Յեժյալների տարազն ու դրանց պատկերագրման ձևերը, գորգա-

#####

¹ С.И. Руденко, Древнейшие в мире художественные ковры и ткани, М., 1968, էջ 55:

² Անդ, էջ 49:

դաշտի կառուցվածքը, գունային լուծումները սերտորեն աղերսվում են այդ նույն դարաշրջանին վերաբերող ասորաբաբելական որմնանկարչությանն ու խճանկարին³ և պատահական չէ, որ ուսումնասիրողներից շատերը, հենվելով իրենց ունեցած լրացուցիչ փաստարկներին, ընդհանուր առմամբ, նույնպես համամիտ են Ս. Ռուդենկոյին:



պատկեր 1

Մասնավորապես այդ կարծիքին են Ռոբերտ Պինները,⁴ Ուլրիխ Շուրմանը⁵ և այլք, որոնք այս առումով որպես սկզբնաղբյուր կարևորել են նաև Նինվեի արքայական պալատների պեղումների ընթացքում 1847 թվականին անգլիացի Օստին Լեյարդի հայտնաբերած մթա 7-րդ դ. վերաբերող Սիննախերիբ և Աշուրբանիպալ արքաների պալատների նախասրահների հատակի գորգանման խճանկարները:

#####

³ **З.А. Рагозин**, Древнейшая история Востока-История халдей с отдаленнейших времен до возвышения Ассирии, С.Пб, 1902էջ 74-77

⁴ **Robert Pinner**, The Earliest Carpets.-Hali,1982, vol.5, no.2, էջ 111-114:

⁵ **Ulrich Schurmann**, Der Pazyryk, Seine Deutung und Herkunft, Hew York- Mannheim, 1982:

Գորգագետ ժողովք Մակմիլանը, որը դեռևս 1957 թվականին Էրմիտաժում հնարավորություն է ունեցել մի քանի ժամ ուսումնասիրել այդ գորգը, գտնում է, որ այն գործել են Աքեմենյան Պարսկաստանում: Այդքանով հանդերձ, այս հեղինակը ներքին եզրագոտու վրա եղած իշայծյամների պատկերները համարում է սկյութական մշակույթին բնորոշ տարրեր:⁶ Այդ ենթադրությունը նա հիմնավորում է նրանով, որ այդ կենդանիները ապրել են Սիբիրում ու Եվրոպայի հյուսիսային մասերում:

Այս գորգը պարսկական գորգերի վաղ նմուշներից մեկն են համարում նաև Իրանի գորգագետները:⁷

Մի շարք ուսումնասիրողներ էլ՝ մասնավորապես վերոհիշյալ Ուլրիխ Շուրմանը, Ֆոլկմար Գանցհոռնը և այլք, գտնում են, որ այդ գորգը գործել են Վանի թագավորությունում և որ այն վերաբերում է հայոց մշակույթին: Ֆ.Գանցհոռնը այդ տեսակետը հիմնավորելու համար պատմահամեմատական ուսումնասիրման է ենթարկել փռյուզիական, ասորաբաբելական, վաղ հայկական կամ ուրարտական կիրառական-գեղագարդման արվեստին վերաբերող սկզբնաղբյուրներն ու գորգի տեխնոլոգիական հատկանիշները՝ մասնավորապես այն կրկնակի հանգույցով գործված լինելու փաստը, ինչպես նաև հայկական լեռնաշխարհում գորգագործական մշակույթի վաղ ավանդույթների մասին վկայող գորգի պատառիկների ու համապատասխան աշխատանքային գործիքների առկայությունը:⁸

Ուսումնասիրողների մի մասն էլ այս գորգի ծագումնաբանության հարցում առաջ էր քաշել ալթայան վարկածը: Մասնավորապես Ստամբուլի համալսարանի պրոֆեսոր Նեյաթ Դիարբեքիրլին գտնում է, որ այդ գորգի գեղագարդման մանրամասերն ու կատարման ոճը հատուկ էր Կենտրոնական Ասիայի թուրք-օղուզական ցեղերի մշակույթին:⁹ Այլոք էլ այս դեպքում նախապատվությունը տալիս են չին-մոնղոլական մշակութային միջավայրին: Այս գորգի հետ կապված վիճաբանությունների մի շարք էլ պարունակում է «Սպոնգո- Բոնգո» ինտերնետային կայքը, ուր իրենց տեսակետներն են ներկայացրել արևելյան գորգի մի շարք մասնագետներ /Մայքլ Վենդորֆ, Ջոն Օուեն, Ջեկ Վագներ և այլն/, ըստ որոնց, այդ գորգին մի դեպքում վերագրվում է ալթայան՝ ըստ այդմ թուրքական, մեկ այլ դեպքում չին-մոնղոլական, տիբեթական, պարսկական կամ քրդական ծագում:¹⁰ Ընդ որում՝ Ջոն Օուենը, օրինակ, համոզված է, որ «Պազիրիկը» գործել են քրդերը:¹¹

#####

⁶ [Джозеф McMullan <http://www.spongebongo.com/her_9902.htm>](http://www.spongebongo.com/her_9902.htm)

⁷ Տես օրինակ՝ M. Javad Nassiri, The Persian Carpet, Napoli, 2002, էջ 1:

⁸ V. Gantzhorn, Le Tapis Chretien Oriental, Koln, 1991, էջ 48-52:

⁹ N. Diyarbekirli, New Light on the Pazyryk Carpet, (Translated from Turkish by Alan Melaart).- Hali, London, 1978, h.1, թիվ. 3, էջ 216 - 221:

¹⁰ www.tcoetribalrugs.com/articleSingapore Power Pt.html:

¹¹ Նույն տեղում:

Չնարավոր համարելով վերոհիշյալ տեսակետների հիմնավոր լինելու փաստը, մենք տարօրինակ ենք համարում այն, որ այդ հեղինակները տեղյակ լինելով Ու. Շուրմանի և Ֆ. Գանցհոռնի կողմից «Պազիրիկը» հայկական մշակույթի մաս լինելու և այն Վանա լճի ավազանում գործելու կարծիքներին, դրանք համարում են անլուրջ և «զգացմունքային»:¹² Մեր համար պարզ չէ, թե «Պազիրիկի» ծագման մասին եղած մյուս տեսակետների թվում ինչո՞ւ են այս մի տեսակետը անընդունելի կամ «զգացմունքային» համարում Մայքլ Վենդորֆը, Ջեյ Կազները, Ջոն Օուենը և էլի ուրիշներ:¹³ Մինչդեռ նրանք գտնում են, որ անկասկած, այն կարող է լինի քրդական՝ այսինքն Միդիայի բնակիչների գործած գորգ: Ինչպես արդեն ասվեց, մենք ընդհանրապես չենք բացառում նաև այդ տարբերակը, բայց ինչո՞ւ այդպես միանգամից մերժել, անլուրջ համարել Շուրմանին, Գանցհոռնին ու բոլոր մյուսներին, որոնք նկատի ունենալով եղած փաստարկները, ենթադրում են, որ այդ գորգը կարող է ունենա հայկական ծագում: Այս խնդիրների առումով, հարկ ենք համարում անել որոշ պարզաբանումներ: Հայտնի է, որ ուսումնասիրողների շրջանում մինչ հիմա էլ կա այն համոզմունքը, որ գորգագործական մշակույթն ունի քոչվորական ծագում, բնորոշ է քոչվորական կենսակերպին, ձևավորվել ու զարգացել է Արևելքում ու Առաջավոր Ասիա է մուտք գործել սելջուկների միջոցով, XI- XII դարերում: Այդ տեսության նշանավոր հետևորդ Կ. Էրդմանի կարծիքով, «Պազիրիկ» գորգն էլ գործել են արևմտյան *թուրքեստանի* բնակիչները՝ սելջուկների նախահայրերը:¹⁴ Այդ տեսության հետևորդները համառորեն անտեսելով Առաջավոր Ասիայում, ու մասնավորապես, Հայկական լեռնաշխարհում գորգագործական մշակույթի գոյության մասին վկայող անտիկ, բյուզանդական, հայկական ու արաբական գրավոր սկզբնաղբյուրներն ու հնագիտական պեղումներից հայտնաբերված գորգի ու կարպետի մնացորդները, շարունակում են զարգացնել տարածաշրջանում դրա ծագման սելջուկյան վարկածն ու այդ ասպարեզում քոչվորական ցեղերի ունեցած առաջնային դերը: Այդ ամենի արդյունքում էլ եզրակացվում է, որ, եթե նույնիսկ «Պազիրիկը» գործել են Առաջավոր Ասիայում, ապա միևնույն է, այն պետք է գործած լինեն քոչվորական կենսաձև ունեցող ցեղերը:¹⁵ Այսպիսին է, փաստորեն, այդ ուսումնասիրողների առջև դրված պահանջը: Գորգի ու առհասարակ գործվածքի ֆիզիկաքիմիական կառուցվածքն այնպիսինն է, որ այն անբարենպաստ պայմաններում շուտ է քայքայվում, հրադիմացկուն չէ, ուստի, ծայրահեղ սակավաթիվ են վաղ ժամանակներին վերաբերող գործվածքի նմուշները: Երջանիկ պատահականության արդյունք հանդիսացող «Պազիրիկից» զատ, խոսքը կարող

¹² www.tcoletribalrugs.com/articleSingapore Power Pt.html:
¹³ www.tcoletribalrugs.com/articleSingapore Power Pt.html
¹⁴ K.Erdman, Der Orientalische Knupteppiche, էջ 13-16:
¹⁵ www.tcoletribalrugs.com/articleSingapore Power Pt.html:

է գնա միայն պեղումների միջոցով հայտնաբերված ածխացած պատառիկների մասին, որոնք թեև չեն կարող լայն պատկերացում տալ տվյալ ժամանակաշրջանի գործի կամ գործվածքի առանձնահատկությունների՝ մասնավորապես գեղազարդման համակարգի վերաբերյալ, այնուամենայնիվ, բացառիկ սկզբնաղբյուրներ են դրա ծագումնաբանության ուսումնասիրման, ինչպես նաև տեխնիկատեխնոլոգիական առանձնահատկությունների բացահայտման հարցերում: Հայկական լեռնաշխարհում հայտնաբերված գործվածքի, ու մանավանդ, ոստայնանկությանը վերաբերող գործիքների ու հարմարանքների բազմաթիվ նմուշներ մեզ թույլ են տվել եզրակացնել, որ այս տարածաշրջանը հանդիսանում է գորգագործական մշակույթի ձևավորման բնօրրաններից մեկը:¹⁶ Այդ հարցում մեծ կարևորություն ենք տալիս Հայաստանի հնագույն բնակատեղիներից /Թեղուտ, Շրեշ բլուր, Շենգավիթ, Արթիկի դամբարանադաշտ և այլն/ հայտնաբերված մթա. III-II հազ. թվագրվող ոստայնանկի գործիքներին ու մանավանդ, գորգ գործելու պարզունակ հարմարանքին ու օժանդակ գործիքներին¹⁷, գործվածքի՝ մասնավորապես Հառիճի դամբարանադաշտից հայտնաբերված XIII-XII դդ մթա վերաբերող կարպետի մնացուկներին:¹⁸

Դրանց առկայությունը հաշվի առնելով էլ հետազոտողները, մասնավորապես պրոֆեսոր Ս. Եսայանը գտնում է, որ Հայկական լեռնաշխարհում կային արդեն գորգագործական մշակույթով զբաղվելու տեխնիկատեխնոլոգիական հնարավորություններ¹⁹, և իհարկե, նաև անհրաժեշտ հունքային ռեսուրսներ:²⁰ Այդ ամենը հիմնավորվում են Հայաստանի ուշ բրոնզեդարյան ու վաղ հայկական բնակատեղիների պեղումներից հայտնաբերված գործվածքի պատառիկներով: 1953-55 թթ. արված պեղումների ընթացքում Երևանին մերձակա Կարմիր բլրից հայտնաբերված գորգի պատառիկի ու մյուս գործվածքների առաջին ուսումնասիրող ու հրատարակիչ Ա.Ս. Վերխովսկայան, պարզելով դրանց տեխնիկատեխնոլոգիական հատկանիշները, շեշտել է դրանց կատարման բարձր որակն ու նրբությունն ու հանգել այն եզրկացության, որ մթա VIII-VII դարերում Վանի թագավորության տարածքում՝ այդ թվում Արարատյան դաշտավայրում գոյություն է ունեցել զարգացած ոստայնանկություն, մասնավորա-

¹⁶ Տես՝ **Ա.Պողոսյան**, Հայաստանում գորգագործության ծագման հարցի շուրջ.- Պատմաբանասիրական Հանդես, թիվ 2, 2001, էջ 236-250:
¹⁷ **С.А. Есаян**, Древняя культура племен северо-восточной Армении III - I тыс. До н.э., Ер., 1976, стр. 208 - 210:
¹⁸ **Т.С. Хачатрян**, Древняя культура Ширака, Ер., 1975, էջ 200 - 201, 254, նույնը՝ Артикский некрополь, Ер., 1979, էջ 176:
¹⁹ **С.А.Есаян**, նշվ. աշխ., էջ 209 - 210:
²⁰ **Г. Капанцян**, Хаяаса-колыбель армян, Ер., 1947, էջ 28, 30,
В. Хачатрян, Восточные провинции хеттской империи, Ер., 1971, էջ 44, 70, 75,
Н. Арутюнян, Земледелие и скотоводство Урарту, Ер., 1964, էջ 151-196:

պես գորգագործությունն ու ասեղնագործությունը:²¹ Այդ ամենի գոյության ու զարգացման համար կային նաև հունքային անհրաժեշտ հնարավորություններ: Մասնավորապես, կենդանաբան Ս.Կ.Դալը Կարմիր բլրից հայտնաբերված նյութերի ուսումնասիրությամբ պարզել է, որ մթա. VII-VI դդ. Արարատյան դաշտավայրում բուծում էին նրբագեղմ, երկարաբուրդ ոչխարներ:²²

Ընդհանրապես, ոստայնանկության վաղ շրջանի վերաբերյալ բավականաչափ տեղեկություններ են պարունակում ասորական սեպագիր աղբյուրները: Դրանցում հիշատակություններ կան հունքի ձեռք բերման ու մշակման, մանելու, ներկելու, գործելու համար անհրաժեշտ արհեստավորների գոյության մասին: Այդ ժամանակաշրջանում տարածաշրջանի խոշոր քաղաքներում գոյություն են ունեցել արքունիքի ու ավագանու, ինչպես նաև պաշտամունքային խոշոր համալիրների կարիքների համար անհրաժեշտ գործվածք՝ հանդերձանք, ծածկոցներ, փռոցներ ու համանման այլ պիտույքներ մատակարարելու համար ստեղծված մանածագործական ու կտավագործական արհեստանոցներ և ներկատներ: Ընդ որում, դրանցում աշխատող արհեստավորները հատուկ վերակացուների հսկողությամբ ստանում էին անհրաժեշտ հունքն ու կատարում կոնկրետ պատվերներ:²³

Ըստ երևույթին, դա բնորոշ է եղել հատկապես քաղաքներին, համենայնդեպս, Ռուսախինելեից /Թոփրախ Կալա/ հայտնաբերված սեպագիր արձանագրություններից մեկում վկայված է, որ այդ բերդաքաղաքի կայազորի կազմում եղել է նաև 68 ոստայնանկ: ²⁴Սկզբնաղբյուրների վկայություններից պարզվում է, որ Ասորեստանը գերադասում էր ներմուծել պատրաստի գործվածք, իսկ նրան հաջորդած Բաբելոնը դրանից բացի, տեղում գործելու համար ներմուծում էր նաև մանվածք ու ներկանյութեր:²⁵ Թեև մեզ հայտնի ասորաբաբելական աղբյուրներում չկան կոնկրետ տվյալներ Ասորեստան ներմուծվող գործվածքի ծագման երկրների մասին, սակայն Չայաստանի հետ գոյություն ունեցած գետային առևտրի առկայությունը, որի մասին հիշատակում է Չերոդոտոսը, հնարավորություն է տալիս ենթադրել, որ այդօրինակ ապրանքներ ստացվում էին նաև Չայաստանից, ուր ըստ այդ այդ նույն աղբյուրի, զարգացած էր

#####

²¹ Տես՝ **Т.С. Хачатрян**, Древняя культура Ширака, стр 251, **А.С. Верховская**, Текстильные изделия из раскопок Кармир –Блура.- Кармир -Блур III, результаты работ 1951-1953 гг., Ер.,1955, стр. 67: Այդ նմուշները պահվում են Չայաստանի պատմության պետական թանգարանում, Չառիճից հայտնաբերվածը՝ N. 2113/6013 և Կարմիր Բլրից հայտնաբերվածը՝ N. 2051/39:

²² **С.К. Даль**, Результаты изучения млекопитающих из раскопок уратского города Тейшебаини.- ԳՍ Տեղեկագիր, թիվ 1, 1952, էջ 82:

²³ **А.А. Мартиросян**, Ткачи храма Эанна в Уруке нововалонского периода - Древний восток, 5, Сборник статей, АН АрмССР, Институт востоковедения, Ер., 1988, стр. 27-40.

²⁴ **И.М. Дяконов**, О некоторых направлениях в урартском языкознании и новых урартских текстах.- Древний Восток 5, Сборник статей АН АРМ ССР, институт востоковедения, Ер., 1988, стр. 168.

²⁵ Նույնը՝ էջ 30:

նաև ոչխարաբուծությունը:²⁶ Հայկական լեռնաշխարհը հարուստ էր նաև ներկանյութերով, որոնց թվում հայտնի էր «*հայկական*» կոչված ներկն ու որի մասին հաղորդում են Ստրաբոնը, Պլինիոս Ավագը, Պրոկոպիոս Կեսարացին:²⁷

Ընդհանուր առմամբ, ոստայնանկությանը վերաբերող տվյալները լրացնելով պատմամշակութային համակարգի մյուս ոլորտներին /ճարտարապետություն, կերպարվեստ, կիրառական արվեստ, հավատալիքներ և այլն/ ցույց են տալիս, որ այդ տարածքներն ինչպես աշխարհաքաղաքական, այնպես էլ տնտեսական առումով ունեցել են կայուն տնտեսական հարաբերություններ ու կազմել մեկ մշակութային ամբողջություն: Ուստի Ասորեստանին վերաբերող վերոհիշյալ տվյալները միանգամայն տիպական են նաև հարևան տարածաշրջանների՝ մասնավորապես Հայաստանի համար: Ինչպես տեսնում ենք, այս ամենը համահունչ են Շուրմանի և Գանցհորնի տեսակետներին ու թույլ են տալիս վստահաբար հանգել այն կարծիքին, որ այդ գորգը գործել են Վանա լճի ավազանում և որ այն առնչվում է հայոց հետ: Ավելի համոզիչ դարձնելու համար ունենք հավելյալ ևս մի փաստարկ, որը վերաբերում է գորգի տեխնոլոգիական ասպարեզին, ուստի, դրա ծագումնաբանության բացահայտման հարցում ունի մեծ կարևորություն: Ըստ այդմ, Էրմիտաժի քիմիկոս-ներկաբանների հետազոտություններից պարզվել է, որ գորգի թելերի կարմիր գույնն ստացված է Արարատյան դաշտի «որդան կարմիր» ներկանյութից:²⁸ Մենք առանցքային ենք համարում նաև «կրկնակի» հանգույցի գործոնը, որ շեշտել են նաև Ռուդենկոն ու մյուս բոլոր հետազոտողները՝ այդ թվում գորգն իր աչքով տեսած Յոզեֆ Մակմիլանը: Հանգույցի այս տեսակը Իրանի մի շարք գորգագործական կենտրոններում հայտնի է «արմանի բաֆ»՝ այսինքն «հայկական աշխատանք» անունով:²⁹ Այս հանգամանքը կարևոր է մանավանդ այն առումով, որ հարևան՝ Բաշադարի դամբարաններից հայտնաբերված գորգի մնացուկների հանգույցները «մեկուկես» կամ «Սենեհ» տիպի են,³⁰ մինչդեռ կրկնակի հանգույցներով են գործված նաև Կարմիր Բլուրից հայտնաբերված VII-VI դդ. վերաբերող գորգի պատառիկները:³¹ Տեխնիկա-տեխնոլոգիական ոլորտից բացի, այդ գորգը հայոց մշակույթի մաս համարելու հարցում փաստում են

#####

²⁶ **Չերոդոտոս**, Պատմություն ինը գրքից: Թարգմանությունը բնագրից Ս.Կրկյաշարյանի, Եր., 1986, էջ 79-80, 305,

²⁷ **Ստրաբոն**: Բնագրից քաղեց և թարգմանեց Հրաչյա Աճառյանը, Եր., 1940, էջ 24,

²⁷ **Հ.Սանանդյան**, Բնական տեսություն հայ ժողովրդի պատմության, հ.Բ, մասն Ա, Եր., 1957, էջ 399-400, նույնը՝ Քաղաքները Հայաստանում, X-XI դդ.: Ընտիր երկեր, հ.Ձ, Եր., 1985, էջ 335-336, **Պրոկոպիոս Կեսարացի**: Բյուզանդական աղբյուրներ, թարգմ. բնագրից Հրաչ Բարթիկյանի, Եր., 1961, էջ 76:

²⁸ **Гавриленко Л.С., Румянцева Р.Б., Глебовская Д. Н.**, Применение метода тонкослойной хроматографии и электронной спектроскопии для анализа красителей древних тканей.- Исследование, консервация и реставрация этнографических предметов. Тезисы докладов, Рига, 1987, էջ 17-18.

²⁹ M. Javad Nassiri, The Persian Carpet, Napoli, 2002, էջ 25:

³⁰ **С.И. Руденко**, նշվ. աշխ., էջ 48-49, տախտակ 36-37:

³¹ **А.С. Верховская**, նշվ. աշխ., էջ 67:

նաև դրա գեղազարդման համակարգի բոլոր հիմնական տարրերն ու դրանց մատուցման սկզբունքները: Դրանք հիմնականում մատնանշել են վերոհիշյալ ուսումնասիրողը, հատկապես Ֆ. Գանցհոռնը:



պատկեր 2



պատկեր 3



պատկեր 4



պատկեր 5


Մասնավորապես, նա անդրադառնալով գորգադաշտի հիմնական հորինվածքի՝ բուսականացված խաչազարդի /պատկեր 2/ ծագման ու տարածման հարցերին, ներկայացրել է փոքրասիական մշակութային միջավայրին, մասնավորապես փռյուզիական ցեղերին վերագրված որմնանկարներում տեղ գտած այդօրինակ մի նմուշ:³² Այդ զարդը, բնորոշ էր նաև հայոց միջնադարյան գեղազարդման արվեստին, մասնավորապես մանրանկարչությանը: Այս առումով, կարող ենք մատնանշել, օրինակ, 1018 թ. Տալաշու վանքում ու 1590 թ. Վասպուրականում ստեղծված ավետարաններում պատկերվածները /պատկեր 3, 4, 5.³³

#####

³² Տես՝ V. Gantzhorn, նշվ. աշխ., էջ 49, պատկեր 42:

³³ Տես՝ Հայ ձեռագրային զարդանկարչություն: Կազմող՝ Լ. Դուրնովո, առաջաբանը՝ Մ.Սարգսյանի, Եր., 1978, տախտակ 11, 92:

Գորգերի առունով այն հատկապես ցայտուն է արտահայտված «Ջրաբերդ» տիպի գորգերի գեղազարդման համակարգում, որպես հիմնական, ճաճանչազարդ հորինվածքի բաղկացուցիչ մաս /պատկեր 6/: Այս զարդը հայոց բնորոշ մեկ այլ՝ մեր տիպաբանությամբ «Կուսապատ» տիպի գորգերի գեղազարդման համակարգի հիմնական հորինվածքն է /պատկեր 7/:



պատկեր 6



պատկեր 7

Կարծում ենք, որ այս ամենը մեզ հնարավորություն են տալիս «Պագիրիկ» գորգի ծագումը կապել հայոց մշակութային գործունեության հետ ու եզրակացնել, որ այն ամենայն հավանականությամբ գործել են Հյուսիսային Միջագետք - Վանա և Ուրմիա լճի ավազաններն ընդգրկող տարածաշրջաններում: Իսկ ընդհանրապես, Արթիկի դամբարանադաշտից հայտնաբերված կարպետի ու Կարմիր Բլրից հայտնաբերված գորգի պատառիկները և մանավանդ «Պագիրիկ» գորգը հնարավորություն են տալիս նշել, որ մինչ գորգագործական մշակույթի ծագումնաբանությանը վերաբերող առարկայական նմուշները մեծամասամբ անմիջականորեն կապված են պատմական Հայաստանի հետ:

Իսկ պատմական Հայաստանում գորգագործական մշակույթի վաղ ավանդույթների մասին վկայող հայերեն և օտարալեզու սկզբնաղբյուրները բազմաթիվ են: #

Մթա. V- IVդդ. Հայաստանին ու մերձակա տարածաշրջաններին վերաբերող գորգերի մասին հիշատակում է Քսենոփոնը:³⁴ Հռոմեացի պատմագիր Տակիտոսը մթ. I դ. պատմում է Արտաշատում եղած ծանր ու թավ գորգերի մասին ու դրանով իսկ արձանագրում նաև նախորդ դարերի ավանդույթներն ու դրանց զարգացման գործընթացը:³⁵ Հայաստանում ու հարակից երկրներում մթա II-I հազարամյակներում ոստայնանկությանը վերաբերող այս նկարագիրը հետագա զարգացում է ստանում միջ-

³⁴ Քսենոփոն, Կյուրոպեդիա, էջ 185, նույնը՝ Անաբազիս, էջ 173-174:
³⁵ Տակիտոս, հունարենից թարգմանեց՝ Ն.Ստոնիկյան, Եր., 1938, էջ 61:

նադարում: Ուշագրավ է այն, որ Հայաստան- Միջագետք առևտրատնտեսական հարաբերությունների համակարգում շարունակվում են նախորդ հազարամյակներում ձևավորված ավանդույթները: Այս առումով պատմամշակութային կարևոր նյութեր են պարունակում հատկապես արաբական սկզբնաղբյուրները: Օրինակ, IX դ. արաբ մատենագիր Աբու Բաքր- ալ Ջահիզը հաղորդում է, որ Հայաստանից ու Ատրպատականից Բաղդադ էր ներկրվում թաղիքներ, թամբեր, գորգեր, նուրբ փսիաթներ, գոտիներ, բուրդ:³⁶ Դրան զուգահեռ, X դ. ապրած Ահմեդ իբն ալ- Յակուբիի հաղորդումների համաձայն, Միջագետքից բուրդը տարվում էր Հայաստան, որտեղ այն մանվում էր, այնուհետև օգտագործվում զանազան գործվածքներ գործելու համար:³⁷ Հայկական գորգերը Բաղդադում համարվում էին արքունիքի ու պալատական տների կահավորանքի բաղկացուցիչ մաս:³⁸ Եվ ոչ միայն Բաղդադում: Դրանք IX-XIII դդ. լայնորեն հայտնի էին Արևելքում՝ Եգիպտոսից մինչև Միջին Ասիա: Կահիրեի շուկայում, ըստ արաբական աղբյուրների, միշտ էլ առաջնությունը տրվում էր «հայկական» գորգերին³⁹ և ի հաստատումն այդ ամենի, X-XI դդ. արաբ մատենագիր աս-Սաալիբին տեղեկացնում է, որ այդ դարաշրջանում /Խալիֆաթի/ ամենաթանկ գնահատվում էին հայկական գորգերը:⁴⁰ Դրանք իբրև այդպիսին, ճանաչում էին գտել Միջին Ասիայում՝ մասնավորապես Խորասանում⁴¹ ու նաև Վոլգյան բուլղարների մոտ: Այս վերջինս հատկապես ուշագրավ է: Բանն այն է, որ 922 թվականին Վոլգյան բուլղարների մայրաքաղաք հասած արաբ դեսպան Ահմեդ իբն - Ֆադլանը գրելով թագավորի վրանի հատակը ամբողջովին գորգապատ լինելու մասին, շեշտել է, որ դրանց մեջ կային նաև հայկական գորգեր:⁴² Այսինքն, հայկական գորգերն ունեցել են գունային ու գեղազարդման համակարգի այնպիսի որոշակի առանձնահատկություններ, որոնցով հստակորեն տարանջատվել են գորգագործական այլ կենտրոնների արտադրանքից և որոնց շնորհիվ նաև ունեցել են բարձր գին ու պահանջարկ: Ընդհանրապես գորգագործական որևէ կենտրոնի արտադրանքի որակի մասին պատկերացում տալու համար ընդունված չափանիշը հայկական գորգերն էին:⁴³

#####

³⁶ **Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, 16:** Արաբական աղբյուրներ, Գ, արաբ մատենագիրներ Թ-Ժ դարեր, /Լեռնաժողովուրդը և բնագրից թարգմանությունները **Արամ Տեր-Ղևոնդյանի**/, Եր., 2005, էջ 428 /հետախույ՝ **Արամ Տեր-Ղևոնդյան**, Արաբական աղբյուրներ/:

³⁷ **Ахмед ибн ал-Якуби**, Кника царств, Перевод и комментарии Н.А.Караулова.- СМОМПК, выпуск 32, Тифлис, 1903, էջ 59:

³⁸ **А. Мец**, Мусульманский ренессанс, М-Л., 1973, էջ 369:

³⁹ Նույն տեղում:

⁴⁰ Նույն տեղում:

⁴¹ **Абу- л- Фазл Бейхаки**, Тарих -и- Бейхаки. Перевод под редакции А.А.Ромаскевича.- Материалы по истории туркмен и Туркмении, т.1, էջ 238, **В.В. Бартольд**, Туркестан в эпоху монгольского нашествия.- Сочинение, т.1, М., 1963, էջ 345-346:

⁴² **Путешествие ибн -Фадлана на Волгу**. Перевод и комментарии Ю. Крачковского, М., 1938, էջ 73:

⁴³ Տես՝ **А. Мец**, Ըշվ.աշխ., էջ 369, **Արամ Տեր-Ղևոնդյան**, Արաբական աղբյուրներ, էջ 361, 599:

Ավելացնենք, որ XII -XIV դդ. Կիլիկիայի նավահանգիստներից էլ հայկական գորգերն արտահանվում էին եվրոպական երկրներ, ու այդ ժամանակներից էլ եվրոպական մի շարք լեզուներում որպես գորգի անվանում տարածում ստացավ «կարպետ» բառը:⁴⁴ Ասվածները վկայում են, որ միջնադարում Հայաստանը շարունակում էր գործվածքի ասպարեզում կարևոր դեր խաղալ տարածաշրջանի առևտրական կյանքում, որ նաև բոլոր տեսակի գործվածքների շարքում ինքնատիպն ու բարձրակարգը գորգն էր, որը միևնույն տեխնիկատեխնոլոգիական ավանդույթներով ու գեղազարդման սկզբունքներով գործում են նաև մեր օրերում, ու մեր օրերում էլ այն շարունակում է մնալ որպես առանձնակի հեղինակություն վայելող մշակութային արժեք:

Այս ամենից հետո ի՞նչ կա զգացմունքային Շուրմանի կամ Գանցհորնի տեսակետներում: Ըստ էության ոչինչ:

Իսկ ինչո՞ւ այն պետք է ունենա քոչվորական ծագում, ինչպես որ համոզված են ուսումնասիրողներից շատերը: Այս առնչությամբ մենք ունենք մի շարք նկատառումներ:

ա/ Քոչվորական կենսաձևի վերաբերյալ: Այս գորգի և ընդհանրապես գորգագործական մշակույթի ծագումնաբանության հարցում շատ է խոսվում քոչվորական կենսաձև վարած ցեղերին նախապատվություն տալու մասին: Կարևոր է համարվում ոչխարաբուծությամբ զբաղվելը, որն ըստ ուսումնասիրողների մի ստվար խմբի համոզման, ապահովում է գորգագործության համար անհրաժեշտ հիմնական հումքը: Ընդունված է նաև, որ գորգը քոչվորներին անհրաժեշտ էր իրենց ամենօրյա կենցաղում՝ որպես կոպիտ մորթիները հաստ ու տաք գործվածքեղենով փոխարինելու հարմար միջոց:⁴⁵

Այսպիսով, գորգագործական մշակույթը քոչվոր ցեղերին վերագրելու հարցում գոյություն ունի երկու հիմնական կռվան՝ անհրաժեշտ հումքի՝ բրդի առատությունն ու կլիմայական ցուրտ պայմաններում փափուկ ու տաքություն պահպանող գործվածքի անհրաժեշտությունը:

Լուրջ ուսումնասիրողների համար միայն այսքանը չեն կարող պատճառ դառնան նման հետևությունների հանգեցում, քանի որ՝

ա/ գորգ գործելու անհրաժեշտ հումք՝ այդ թվում ոչ միայն բուրդ, այլ նաև բամբակ, կանեփ, մետաքս անհրաժեշտ քանակությամբ ունեին նաև նստակյաց կենսաձև վարող հանրույթները: Նրանք ունեին նաև այդ մշակույթի համար անհրաժեշտ ներկանյութերն ու դրանց մշակելու բոլոր անհրաժեշտ հմտությունները, և որ գլխա-

⁴⁴ Ղևոնդ Ալիշան, Սիսական, Վենետիկ, ս.Ղազար, 1893, էջ 436, 441:
⁴⁵ Այս մասին մասնավորապես տես՝ www.tcoletribalrugs.com/articleSingapore Power Pt.html

վորն է՝ մշտական բնակատեղի ու դրանով պայմանավորված համապատասխան արտադրական շինություններ:

բ/ գորգն ըստ էության միայն փափուկ ու ջերմություն պահող միջոց չէ: Այդ առումով, քոչվորների համար անտարակույս, ավելի հեշտ ու մատչելի են նույն ոչխարի, ինչպես նաև որսի կենդանիների մորթիները:

Այս ամենը, բնականաբար, չեն նշանակում թե քոչվորներին բնավ էլ պետք չէին խավոտ գործվածքներ, այլ հարց է, որ դրանք բավարար պատճառներ չեն գորգագործական մշակույթի ծագումնաբանության հարցում քոչվորական կենսաձևին որևէ նախապատվություն տալու համար: Մինչդեռ քիչ չեն այդ մոտեցումը մերժելու համար անհրաժեշտ փաստարկները: Դրանցից մի քանիսին մենք անդրադարձել ենք մեր նախորդ ուսումնասիրություններում:⁴⁶

Մեզ հայտնի այդօրինակ ամենավաղ տեղեկությունը հաղորդում է Քսենոփոնը՝ ներկայացնելով մթա V դ. վերջերին Կյուրոսի և Յյուսիսային Միջագետքի կուսակալներից մեկի՝ Գոբրյուասի երկխոսությունը: Կյուրոսը ցանկանալով պարզել, թե իրենցից ով ավելի շատ գորգեր ունի, դիմում է նրան և ստանում հետևյալ պատասխանը՝ «Հաստատ գիտեմ, որ դուք ավելի շատ գորգեր ու մահիճներ ունեք, ձեր տունը ևս շատ ավելի մեծ է, քան իմը. քանզի ձեզ համար իբրև տուն ծառայում են երկիրը և երկինքը, ձեզ համար մահիճ է այն վայրը, որտեղ և կարելի է պառկել հողին, դուք գորգ եք համարում ոչ թե ոչխարների բուրդը, այլ այն ամենը, ինչ լեռներն ու դաշտերն են տալիս»:⁴⁷

Անկասկած, այստեղ ակնարկված է նստակյաց և քոչվորական կենսաձևերին բնորոշ ապրելակերպը: Ասորեստանի կուսակալը Կյուրոսին տված իր այս պատասխանով ավելի քան 2500 տարի առաջ հերքել է գորգագործական մշակույթը քոչվորական ցեղերին բնորոշ համարող XIX դ. վերջին քառորդում ձևավորված տեսությունը: Բայց նա միակը չէ և ունի իր հետնորդները: Ահավասիկ XVIII դ. կեսերին վերաբերող, այդ տեսությունը հերքող ևս մի վկայություն, որը պատկանում է քոչվորների կենցաղին քաջատեղյակ Շուշվա Փանահ խանի վեզիր աշուղ Վագիֆին՝

... եթե գեղեցկուհու իրանը նուրբ է ջնարակի նման
Նա արժանի է ոչ թե տորքի, այլ՝ հինայի:
Քոչվորն անտուն է, կայան չունի,
Մի՞թե կարող է նա դրան հարմարվի...⁴⁸

/Ռուսերենից բառացի թարգմ.՝ Ա.Պ./

Ավելի լայն առումով այդ նույն միտքն է հրապարակել նույն դարի թուրք պատմագիր Ջեվդեթ փաշան: Նա հաղորդելով թուրքերի կողմից Անապայում հայկա-

#####

⁴⁶ Տես՝ Ա.Պողոսյան, Հայաստանում գորգագործության ծագման հարցի շուրջ, էջ 24:

⁴⁷ Քսենոփոն, Կյուրոսպեդիա: Թարգմ. հունարեն բնագրից ու ծանոթագր.՝ Ս. Կրկյաշարյան, Եր., 2001, էջ 185:

⁴⁸ Керимов Л., Азербайджанский ковер, т. 3, Б., 1983, էջ 121:

կան թաղամաս հիմնելու մասին, նշում է, որ «եթե մի բերդի վարոշում /բնակելի թաղամասերում-Ա.Պ./ քրիստոնյա ռայաներ չլինեն, այդպիսի տեղերում անհրաժեշտ գործերի կարգավորումը դժվար կլինի»:⁴⁹

Սի դիտարկում էլ՝ XIX դ. վերջին քառորդին վերաբերող: Ֆրանսիացի հայտնի աշխարհագրագետ Էլիզե Ռեկյուն հայոց գործունեության մասին գրում է, որ «Վանի վիլայեթում չկայ մեկ հատիկ տուն, որ շինուած չլինի նրանց ձեռքով, չկայ տեղական մի պաստառ, որ նրանց մատների արդյունք չլինի. հազիվ թե գտնվի մի պտուղ, որ բսած չլինի նրանց այգիներում»:⁵⁰

Հայաթափված տարածաշրջանների տնտեսական իրավիճակի ուսումնասիրումները անուղղակիորեն մատնանշում են այդ նույն պատկերը: Օրինակ, 1925-1926 թթ. ներկայիս Ադրբեջանի տարածքում եղած նախկին գորգագործական կենտրոններում կատարված վիճակագրական ուսումնասիրություններից պարզվել է, որ 1918 – 20 թթ. հայաթափվելուց հետո, դադարել են գոյություն ունենալ Շամախու, Գյոկչայի, Աղդամի, Նուխու ու Ջաքաթալայի մինչ այդ հանրահայտ գորգագործական կենտրոնները:⁵¹

Այդ նույն իրավիճակն էր նաև Շուշիում: Անդրկովկասյան տնայնագործության հայտնի գիտակ Ա.Ս. Փիրալովն իր «Кустарная промышленность Закавказ. Республик»[®] հոդվածում գրում է, որ XIX դ. վերջերին Շուշին «գորգի արտադրության կենտրոն է եղել: Այստեղ հավաքվել էին խոշոր արտահանողներ և ամենաճաշակավոր գորգագործներ, որոնց արտադրանքը արտահանվում էր Արևմտյան Եվրոպա և առանձնապես Անգլիա»:⁵² Իսկ ահա 1920 թ. մարտին հայաթափվելուց հետո, 1925-27 թթ. կատարված վիճակագրական ուսումնասիրություններից պարզվում է, որ երբեմնի մարդաշատ՝ ավելի քան քառասուն հազար բնակիչ ունեցող ու մշակութային և տնտեսական կենտրոնի հռչակ վայելող այդ քաղաքում 1926 թ. ապրում էր միայն 5107 մուսուլման, իսկ տնտեսական գործունեությունը աննշան էր ու նույնիսկ համարյա վերացել էր սազ, թառ ու քամանչա պատրաստելը:⁵³

Բանը հասել էր նրան, որ տեխնոլոգիական կոպիտ սխալի՝ յուրաքանչյուր հանգուցաշարից հետո հաստ ու բարակ միջնաթելերն հակառակ կարգով անցկաց-

⁴⁹ **Ջելդեթ փաշա**, Թարիխի Ջելդեթի.- Թուրքական աղբյուրները Հայաստանի, հայերի և Անդրկովկասի մյուս ժողովուրդների մասին, թարգմ. Ս. Սաֆրաստյանի, հ.Ա, Եր., 1961, էջ 275 - 276:

⁵⁰ Այս մասին տես՝ **Վարանդեան Միքայել**, Հայկական շարժման նախապատմություն, հտ. 1-2, ժընեվ, 1912, էջ 146-147:

⁵¹ **В.Н. Худяков**, Закавказье /Историко-экономический очерк/, 1926. М-Л., Под общей редакцией М. П. Павловича, М-Л., 1926, стр. 140.#

⁵² **Գ. Սեյրան**, Է Ղարաբաղի տնտեսական կյանքը և նրա հեռանկարները /տնտեսական աշխարհագրություն/, Թիֆլիս, 1928, էջ 66 - 69, 72: Նաև՝ **А. С. Пиралов**, Кустарная промышленность Закавказ. Республик. - Закавказье - Историко-экономический сборник, Тифлис, 1925 /մեջբերումն արված է՝ **Գ. Սեյրան**, նշվ. աշխ., էջ 67/:

⁵³ **Գ. Սեյրան**, նշվ. աշխ., էջ 7, 72, 95:

նելու պատճառով այդ տարիներին Ադրբեջանում գործված հազարավոր գորգեր խոտան էին ճանաչվել: Միայն 1930-ական թթ., երբ բացվեցին գորգագործական դպրոցներ ու ստեղծվեցին մասնագետ կադրեր, նոր զարգացում ստացավ ապրանքային գորգագործությունը:⁵⁴

Մեկ այլ վկայություն է: Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին թուրքական կանոնավոր բանակի կազմում մարտական գործողությունների ակտիվ մասնակից, վեներուելացի կանավորական Ռաֆայելո Նոգալեսը 1915 թվականի հուլիսին լինելով Տիգրանակերտում, ի թիվս շատ ուշագրավ դիտարկումների, նշում է որ Տիգրանակերտում քարհետներն ու առևտուրը հիմնականում պայմանավորված էր հայերի ակտիվ գործունեությամբ, ուստի նրանց կոտորվելուց ու աքսորվելուց հետո «շուկաները դատարկված էին, կաշվի, գորգի, բրդի ու մետաքսի արտադրությունը ամբողջովին կազմալուծված»:⁵⁵

1915 թվականին վերաբերող ևս մի վկայություն: 1897 թվականից Ուրֆայում գործում էր գերմանական միսիոներության ներկայացուցիչ Ֆրանց էքարտի հիմնադրած գորգագործական «Մազպանե» ֆաբրիկան: Այն այդպես էր կոչվել քաղաքի հայոց Մասմանե թաղամասի անունով: Ուրֆայի հայերի հետ կատարված իրադարձությունների ականատես Բրունո էքարտը՝ Ֆրանց էքարտի կրտսեր եղբայրը իր հուշագրություններում նշում է, որ այնտեղ աշխատում էին 250 հայ գորգագործուհիներ:⁵⁶ Հուշագիրը գրում է, որ 1915 թվականի հոկտեմբեր -նոյեմբերին թուրքերը նրանց նույնպես աքսորում են Սիրիա և դրանով «վերջին հարվածն է հասցվում Ուրֆայում գերմանական արդյունաբերական և քարոզչական աշխատանքներին»:⁵⁷ Ասել է թե ամբողջովին մահմեդականներով բնակեցված, ինչպես նաև դեռևս քոչվորական կենսաձևը շարունակող ցեղերով բնակեցված տարածաշրջանում գերմանացի ձեռնարկատերը հնարավորություն չի տեսել իր շահավետ գործունեությունը շարունակելու համար: Այս բոլոր դեպքերում խոսքը գնում է մի կողմից նստակյաց կենսաձև վարողների՝ հանձինս հայոց, մյուս կողմից էլ քոչվորների՝ ի դեմս թուրքմենական ծագումով տարատեսակ վաչկատուն ցեղերի մասին: Ուրեմն ի՞նչ հիմք ունեն գորգագործական մշակույթի ծագումը քոչվորական կենսաձևին կապող «ուսումնասիրողները»: Ըստ էության ոչ մի հիմք:

Ուղղակի գորգագործական մշակույթն ուսումնասիրողների մի մասի մոտ եղել է ու կա այդպիսի հախուռն ցանկություն:

#####

⁵⁴ Տես՝ **Л. Керимов**, Азербайджанский ковер, т. 2, Б., 1983, էջ 54-55:

⁵⁵ **Рафаель де Ногалес**, Четыре годы под полумесяцем, М., “Русский вестник”, 2006, էջ 108.

⁵⁶ **Բրունո էքարտ**, Ապրածս օրերը Ուրֆայում, Պոստիամ, 1922, /գերմաներենից թարգմ. Ա.Գասպարյանի, ներածական մասը, ծանոթագրություններն, խմբագրումն ու հրատարակումը՝ Ժ.Ավետիսյանի/ Եր., 1990, էջ 6,15,19:

⁵⁷ **Բրունո էքարտ**, նշվ. աշխ., էջ 47:

Մենք այս ուսումնասիրությամբ նպատակ չունենք մանրամասնորեն անդրադառնալու հայոց գորգագործական կենտրոններին, դրանց պատմությանն ու բնորոշ գորգերին, սակայն ասվածն էլ ցանկության դեպքում բավարար է, որպեսզի այս հարցերով հետաքրքրվողները պատկերացում կազմեն գորգագործական մշակույթի ասպարեզում հայոց ունեցած առանցքային նշանակության մասին: Ընդ որում, թեև փաստարկների մի վիթխարի քանակություն, հատկապես Ֆոլկմար Գանցհոռնի ծավալուն աշխատության շնորհիվ, վաղուց ի վեր շրջանառության մեջ է, բայց այդուհանդերձ ուսումնասիրողների մի ստվար խումբ հաշվի չի նստում դրանց գոյության հետ: Այն տպավորությունն է, թե ուսումնասիրողների մի մասն այդ ամենին բացարձակապես անտեղյակ է, իսկ որոշներն էլ կարծես թե այնքան էլ լուրջ չեն վերաբերում դրանց /Վենդորֆ, Ջոն Օուլեն, Ջեկ Վագներ և այլն/:⁵⁸

բ.«Քոչվորական» կոչված գորգերի մասին: Սկզբնաղբյուրները հնարավորություն են տալիս պատկերացում կազմել նաև մեկ այլ կարևոր խնդրի մասին՝ իրականում ի՞նչ ծագում ունեն փոքրասիական եկվոր մահմեդական նստակյաց կամ քոչվոր ցեղերի սեփականություն դարձած մշակութային արժեքների գերակշիռ մասն ու, այդ թվում, նաև գորգերը: Այս կապակցությամբ վերն արդեն հիշատակված Բրունո Էքարտը կոտորածներին հաջորդած ու բռնի տեղահանության ողջ ընթացքում շարունակված համատարած կողոպուտի մասին գրում է՝ «քաղաքում և նրանից դուրս ամիսներ շարունակ գողացված ապրանքների աշխույժ առևտուր էր տեղի ունենում: Անշուշտ ավարի արժեքավոր մասը կառավարությունը վերցրել էր և ամեն օր աճուրդով վաճառք էր կազմակերպում՝ զարմանալիորեն ցածր գներով և ապրանքները վաճառում էին միայն թուրքերին: Ժամանակի ընթացքում հայ բնակչության ունեցվածքն անցավ մահմեդականներին և այդպիսով նրանք հասան մարդկանց բնաջնջման գլխավոր նպատակին»:⁵⁹

Այս առիթով էլ ուշագրավ դիտարկումներ ունի մեզ արդեն ծանոթ Նոգալեսը:

Նա գրում է, որ «Տիգրանակերտի գլխավոր մզկիթ Ուլու-Ջամիի պարզ կամարներն ու սյունաշարերը չափազանց տարբերվում են քաղաքի մյուս՝ հարուստ քանդակազարդված մզկիթներից: Տարբերվում է նաև այդ մզկիթի հյուսիսային ճակատը, որն ամբողջովին երեսապատված է մարմարե ու սպիտակ քարի սալիկներով, որոնց վրա փորագրված են արձանագրություններ՝ ընդ որում վերին մասում ավելի հին գրություններ են, քան ներքևինը, թեև իրականում պետք է լիներ հակառակը: Նման տարօրինակ առանձնահատկություններով են նաև բերդի աշտարակները: Չնայած դրանցից մի քանիսի վրա դեռևս պահպանվել են երկգլխանի արծվի

#####

⁵⁸ www.tcoletribalrugs.com/articleSingapore Power Pt.html:

⁵⁹ Բրունո Էքարտ, նշվ. աշխ., էջ 57- 58:

քանդակապատկերով քարե զինանշանները՝ հին Հայաստանի խորհրդանշանը, պատերին փորագրված վերամբարձ արձանագրություններն այդ կառույցները վերագրում են քուրդ ու թուրքմեն իշխողներին: Այնուամենայնիվ, #ես կարծում եմ, որ ներքին շարքերի բազալտե սալերը հանված ու փոխարինված են նույնանման, բայց մարմարե սալերով, որոնց վրա էլ փորագրվել են կեղծ հիշատակարանները: Հնարավոր է, որ սուլթաններն ու մուսուլման իշխողները այդ ճանապարհով ցանկացել են մնալ պատմության մեջ՝ որպես քաղաքների ու ամրոցների հիմնադիրներ, թեև իրականում եղել են ընդամենը ուրիշի փառք փախցնողներ:⁶⁰ Հեղինակի այս մտորումները միանգամայն համահունչ են տարածաշրջանում 11-12-րդ դդ. հիմնավորման սելջուկ-թուրքական ցեղերի վարած հեռահար քաղաքականությանը, որի վերաբերյալ վերն արդեն հիշատակված թուրք պատմագիր Ջեվդեթ փաշան, իր ուսումնասիրած սկզբնաղբյուրների հիման վրա գրում է, որ «սելջուկյան Մելիք շահը հետևելով իր պապերին, իր գրաված տիրույթների ապահովության համար թե Անադոլուի երկրամասում և թե Վրաստանի սահմաններից սկսած՝ մինչև խազերի ծովը բազմաթիվ թուրքական ցեղեր բնակեցրեց»:⁶¹ Այսինքն, արդեն իսկ սելջուկները սկսել էին գրավյալ տարածքների պատմամշակութային յուրացման, բնիկների ունեցվածքին տիրանալու, այն իրենց վերագրելու լայնածավալ, միանգամայն մտածված ծրագրի իրականացման գործընթաց, որը պետք է շարունակվեր հետագա դարերում ևս ու ավարտվեր 1915 թվականին երիտթուրքերի կազմակերպած հայոց եղեռնով: #

Ի՞նչ իրավիճակ ստեղծվեց եղեռնից հետո: Այս առումով էլ բերենք մեկ դիտարկում ևոգալեսի հուշագրությունից: Նա 1917 թվականի վերջերին ծառայության բերումով կրկին լինելով Տիգրանակերտում, գրել է «Դիարբեքիում համարյա ոչինչ չի փոխվել: Սրի քաշված հայ բնակչության փոխարեն այնտեղ հիմնավորվել են արևելյան գավառներից փախած թուրքերն ու քրդերը: Քաղաքի տների հարթ ու հողածածկ տանիքներից երևում են տարբեր կողմեր գնացող նեղ փողոցները: Դրանց երկայնքով կանգնած էին մուգ նյութից կառուցված մեծ շինություններ՝ զարդարված գեղազարդ **հայկական գործվածքներով**... Կենտրոնական փողոցները լիքն էին նեղ ու ցածր խանութներով ու մանր արհեստանոցներով, ուր տնայնագործները պազած սանդալի փայտի վրա անում է փորագրություններ, մշակում էին սադափ ու մարմարի կտորներ, կաշվից ու բրդե կտորեղենից կարում էին բազմագույն վերնագգեստներ, պատրաստում էին ոսկյա ու արծաթյա ֆիլիգրան առարկաներ կամ մետաքսաթելով ասեղնագործում էին կարմիր կաշվից ու թաղիքից պատրաստված ձիու թամբի

#####

⁶⁰ Рафаель де Ногалес, Աշվ.աշխ., էջ 107:

⁶¹ Ջեվդեթ փաշա, էջ 251 - 252:

ծածկոցներ, որոնք այստեղ անվանում էին ջուլ»:⁶² Ինչպես տեսնում ենք, երկու-երեք տարի անց, քաղաքում վերսկսվել էր արհեստագործական կյանքը, ներկա են հայոց գործվածքները՝ չկան նրանց ստեղծողները:

Ականատեսների վկայությամբ Դեր -էլ Ջոր հասնելուց առաջ, Սիրիայի ու Թուրքիայի ներկայիս սահմանագծում ընկած ճարաբլուս բնակավայրում էր կատարվում գաղթականների վերջին կողոպուտը: Ջապել Եսայանը պատմում է, որ ճարաբլուսի գյուղապետը իր գնած ապրանքների արժեքը հասկանալու համար իրեն ցույց է տվել ամենաբազմապիսի իրեր, գորգեր, ասեղնագործություններ, վարագույրներ, արծաթեղեն, պղնձե ամանեղեն և այլն, որոնցից մի քանիսի վրա կային արյան բծեր:⁶³ Այստեղ թող տարօրինակ չթվա գյուղապետի կողմից այդ ամենը գնված լինելու հանգամանքը, ինչպես հայտնում է Բրունո Էքարտը, դրանք վաճառվում էին միայն թուրքերին, աճուրդների միջոցով ու սիմվոլիկ գներով:

Բրունո Էքարտը 1917 թ. հունիսին լինելով Ռաս -էլ Այնում՝ Բաղդադին մերձակա երկաթուղային կայարաններից մեկում, որպես Բաղդադի երկաթուղային ընկերության ծառայող, առիթ է ունեցել մի չերքեզական գյուղում առնչվել այնտեղ աքսորված հայերի ճակատագրին: Նա գրում է, որ «այդ հրապուրիչ օազիսը հասած 14000 հայերից կենդանի էին մնացել միայն մի քանի ցնցոտիավոր կանայք, անուշադրության մատնված երեխաների մի բազմություն և երկու բրուտ»:⁶⁴ Այնուհետև ավելացնում է, որ «գավառապետի հրամանով մեծ ճամբարից քշում են 400-500 հոգիանոց ջոկատներ և Ռաս-էլ Այնից արևելք, երկու ժամվա հեռավորության վրա գտնվող մի ամալի տարածքում նրանց սպանում են: Ժանդարմները և չերքեզները արյունոտ այդ գործը կատարել են, որպեսզի տիրանան ունևոր հայերի հարստությանը: Առաջին ջոկատը կազմել են հարուստ ընտանիքները: Այն բանից հետո, երբ նա իր ձեռքով վերցրել էր սպանվածների կանխիկ դրամը և արժեքավոր իրերը, մարդասպանները նրանց մնացած իրերը քարշ էին տվել իրենց տները: Չերքեզների խրճիթները, իմ աչքով են տեսել, լցված էին հայերի ունեցվածքով: Ինչպես ամենուրեք թուրքական կայսրությունում, այստեղ նույնպես հայերը թուրքական անսահման ընչաքաղցության զոհ դարձան: ⁶⁵

Ամբողջ պատմական Հայաստանի տարածքը 13-18-րդ դարերի ընթացքում եղել է թուրքմենական տարբեր ցեղերի ու ապա թուրք-պարսկական անընդմեջ պատերազմների թատերաբեմ: Անտարակույս, դրանք ուղեկցվել են համատարած ավարառությամբ, որի արդյունքում էլ հայոց մշակութային արժեքներն, այդ թվում՝ նաև

⁶² Рафаель де Ногалес, Գշվ.աշխ., էջ 339-340:
⁶³ Եսայան Ջ., Ժողովրդի մը հոգևարքը.- Գործ, թիվ 2, Բաքու, 1917, էջ 127:
⁶⁴ Բրունո Էքարտ, Գշվ. աշխ., էջ 61:
⁶⁵ Նույն տեղում, էջ 62-63:

գորգերը, դարձել են եկվոր նվաճողների, այդ թվում նաև նրանց մզկիթների սեփականություն: Պարբերաբար կատարվել էր այն, ինչ որ կատարվեց 1915-1922 թվականներին Տիգրանակերտում, Ուրֆայում և առհասարակ Արևմտյան Հայաստանի մեծ ու փոքր բոլոր բնակավայրերում:

Դիարբեքիի վիլայեթում նախքան կոտորածներն ապրում էր 124000 հայ, կոտորածներից հետո, 1926 թվականի տվյալներով այդ թվից մնացել էին հինգ հարյուրը: Ընդհանրապես Արևմտյան Հայաստանի ու փոքրասիական հայաբնակ կենտրոնների շուրջ 2.500000 միլիոն հայերից մնացել էր ընդամենը մոտ 25000 հայ, ընդ որում Վանի, Բիթլիսի, Էրզրումի վիլայեթներում և վերը հիշատակված Ուրֆա քաղաքում 1926 թվականի տվյալներով հայ չի գրանցվել:⁶⁶

Անկախ, նրանից որ, արևմտյան Հայաստանի մի քանի խոշոր քաղաքներում կոտորածներից հետո մնացել էին աննշան քանակությամբ հայեր, մասնավորապես արհեստավորներ, այդուհանդերձ, վերոհիշյալ վկայությունների շնորհիվ ակնհայտ է, որ դարեր ի վեր շարունակված կոտորածների ու ավարառությունների և այդ ամենը եզրափակած ցեղասպանության արդյունքում, բացի պատմական Հայաստանի տարածքից, թուրքերի, քրդերի ու մահմեդական այլ ցեղերի սեփականությունն է դարձել նաև հազարամյակների ընթացքում ձևավորված հայոց մշակութային ողջ ժառանգությունը:

Եվ ահա XIX դ. վերջին քառորդից սկսած արտերկրի արևելագետների ու մշակութաբանների մի ստվար խմբի ջանքերով մշակվել ու ասպարեզ են նետվել թուրքական ցեղերին մշակութային պատմուճանով հարդարելուն ուղղված տեսություններ, որոնցով առաջ էին քաշվել նրանց կողմից Առաջավոր Ասիայում գորգագործական մշակույթը տարածելու և «քոչվորական» գորգի մասին լեգենդները:

Անտարակույս, այդ ցեղերին անհայտ չէր գորգագործական մշակույթը: Սակայն այն չուներ զարգացման այն մակարդակն ու տեխնիկատեխնոլոգիական և գեղարվեստական հատկանիշները որոնցով բնորոշվում էին Արևելքի շուկաներում բարձր հեղինակություն ու պահանջարկ վայելող գորգերը: Որպես ասվածի հիմնավորում հարկ ենք համարում հիշատակել երկու հանրահայտ վկայություն: Հայաստանի հարևան Ատրպատականի էմիր Յուսուֆը արև. Սաջը 911 թ. իր դեմ թշնամացած Մուքտադիր խալիֆի հետ հարաբերությունները բարելավելու նպատակով ի շարս այլ նվերների, մատուցում է նաև հայկական յոթ գորգ:⁶⁷ Հայկական գորգերն նվիրատվության առարկաներ էին նաև Հայաստանից հեռու գտնվող երկրներում: Մասնավորա-

⁶⁶ Ցեղասպանությունից առաջ և հետո Արևմտյան Հայաստանի հայեր թվի մասին տես՝ **Loretta Gulian Boxdorfer**, The Ars data Bank of Inscribed Armenian Rugs.- Rites of Passage in inscribed Armenian Rugs, Edited By **Ejland L. Murray**, San Francisco, 2002, էջ 25:

⁶⁷ **Март Н.Я.**, Ани, Ер., 1939, էջ 237- 238, տես նաև **А. Меу**,, նշվ. աշխ., էջ 369:

պես, Ղազնկիոյան սուլթան Մահմուդը XI դ. սկզբներին թուրքմենական ցեղերի առաջնորդ Կադր խանին նվիրում է *հայկական գորգ* և այլ գորգեր:⁶⁸ Հայկական գորգերը առանձնակի հիշատակված են նաև Սուլթան Մահմուդի որդու՝ Մասուդի ստացած նվերների ցուցակում, որոնք վերջինս ստացել էր Խորասանի կառավարիչ Սուրիից:⁶⁹ Այս բոլոր դեպքերում էլ, անկախ Հայաստանից հեռու կամ մոտիկ լինելու, նվիրատուները իշխում էին գորգագործության ավանդույթներով հարուստ, քոչվոր ու կիսաքոչվոր ցեղերով բնակեցված երկրներում, բայց, այդուհանդերձ, կարևորագույն խնդիրներ լուծելու առումով նվիրատվության պարագայում, նրանք նախապատվությունը տվել են հայկական գորգերին:

Հայոց մշակութային գործունեության ու հայոց պատմական ճակատագրի մասին նշված համառոտ ու տարբեր ժամանակաշրջաններին վերաբերող ու հիմնականում օտար սկզբնաղբյուրներից բերված այս երկար ու ձիգ տեղեկություններն ու ուսումնասիրողների դիտարկումները ներկայացնելը պայմանավորված է երկու հիմնական նկատառումով, նախ՝ անտեղյակներին կամ անտեղյակ ձևացողներին մեկ անգամ ևս մատնանշել պատմական Հայաստանում գորգագործական մշակույթի հայտնի լինելն ու ավանդաբար հայոց բնորոշ լինելու փաստը, և այնուհետև՝ «Պազիրիկ» գորգի ծագման տարածաշրջանների և այն գործող էթնիկական հանրույթների թվում պատմական Հայաստանի և հայոց հավանական լինելու հնարավորությունը: Ուստի, Ուրիխ Շուրմանը, Ֆոլկմար Գանցհոռնը և բոլոր նրանք, ովքեր այս գորգի ծագումը այս կամ այն չափով կապում են հայոց հետ, բոլորովին տուրք չեն տալիս իրենց զգացմունքներին և դուրս չեն պատմամշակութային տեղեկությունների ու տվյալների ընձեռած հնարավորությունների սահմաններից: Համենայնդեպս, չեն հանգում այնպիսի արտառոց հետևությունների, ինչպիսին անում է Մայքլ Վենդորֆը, հայտարարելով, որ այդ գորգն ու նույն դամբարանից հայտնաբերված թաղիքները գործել են միևնույն ցեղերը, թեև ակնհայտ է, որ դրանք աղերսներ չունեն ինչպես տեխնոլոգիական, այնպես էլ գեղազարդման արվեստի առումներով:⁷⁰

Կարծում ենք, որ վերը շարադրված փաստարկները, մեզ թույլ են տալիս եզրակացնել, որ «Պազիրիկ» գորգը գործելու հավանական տարածաշրջաններից մեկը պատմական Հայաստանն է, մասնավորապես Վանա լճի ավազանը, և որ ի շարս այդտեղ բնակված ու նստակյաց կենսաձև վարած այլ էթնիկական հանրույթների, այն կարող է գործած լինեն նաև հայերը:

#####

⁶⁸ В.В. Бартольд, նշվ. աշխ., էջ 345-346:

⁶⁹ Абу- л- Фазл Бейхаки, էջ 238:

⁷⁰ www.tcoletribalrugs.com/articleSingapore Power Pt.html:

Չընդունելով այդ գորգի ծագման քոչվորական վարկածը, անտարակույս, մենք չենք մերժում սկզբնաղբյուրների հիման վրա արված այլ տեսակետները, նկատի ունենալով այն պարագան, որ Առաջավոր Ասիայում և Փոքր Ասիայում այդ դարաշրջանում գոյություն են ունեցել մի շարք այլ գորգագործական կենտրոններ ու այդ մշակույթով զբաղվող էթնիկական հանրույթներ, որոնք իվիճակի էին ստեղծել այդօրինակ գործվածքներ:

The image shows a highly detailed, traditional rug. The central field is a large square divided into a 5x5 grid of smaller squares. Each of these smaller squares contains a complex, symmetrical geometric pattern, possibly a stylized star or floral motif, in shades of red, yellow, and green. This central field is surrounded by a wide, multi-layered border. The innermost border consists of a repeating pattern of small, stylized animals, likely horses or deer, in a reddish-brown hue. The outermost border is a complex, multi-colored band with various geometric and floral designs. The overall color palette is rich and earthy, dominated by reds, yellows, greens, and browns. The rug appears to be made of wool or a similar natural fiber, with a visible texture. There are some dark, irregular shapes in the upper left corner, possibly representing damage or shadows on the original surface.

ASHKHUNJ POGHOSYAN

ON ORIGIN OF "PAZYRYK" RUG

Yerevan - 2013

